# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-19/2/1

ք.Աշտարակ

«08» Օգոստոսի 2019 թ.

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Թ.Ճաղկալյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **Ազարակ ԲԲԸ**-ն, ի դեմս տնօրեն **Կ.Բարսեղյան** ի, որը գործում է **ԲԲԸ** կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ նախահաշվով նախատեսված Աշտարակ համայնքի Կոմիտասի անվան այգու բարեկարգման ,կից խաչմերուկի բարեկարգման և կարգավորման շինարարական աշխատանքներ և Աշտարակ համայնքի Նախկին շուկայի տարածքում ժամանցային գոտի կառուցելու շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Չափաբաժին 1 և Չափաբաժին 2 համար 2019թ. նոյեմբերի 15 ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը).

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին.

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Ներգրավել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները անվտանգ և որակյալ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե

երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն դաշտերը, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքները:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված

աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման ընդունման ավարտական արձանագրություն.

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **50700000 (հիսուն միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ**, որից **8450000 (ութ միլիոն չորս հարյուրհիսուն հազար) ՀՀ դրամը**՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին **28800000 (քսանութ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որից 4800000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:**

2-րդ չափաբաժին **21900000 (քսանմեկ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որից 3650000 (երեք միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՍԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՍԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1]

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված ժամկետում Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

[1] Եթե պայմանագրում ներառված են՝ մեկ ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՍԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի ավելացման փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են։

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա։ Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն։

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի։ Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է, ձևոր բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը։

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը։ Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից։

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով։ Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ։ Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը։

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101169
Համայնքի ղեկավար

------------ Թ.Շահվերդյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ագարակ» ԲԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի
«Արշինբանկ» ՓԲԸ Աշտարակ մ/ճ
Հ/Հ 247070005407
ՀՎՀՀ05003862

------------ Կ.Բարսեղյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են կատարվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։*

*Հավելված թիվ 1*
*« 08 » Օգոստոսի 2019 թ. կնքված*
*ՀՀԱՄԱՇՏ ԳՀԱՇՁԲ-19/2/1 ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Աշտարակ համայնքի Կոմիտասի անվան այգու բարեկարգման ,կից խաչմերուկի բարեկարգման և կարգավորման շինարարական աշխատանքներ և Աշտարակ համայնքի Նախկին շուկայի տարածքում ժամանցային գոտի կառուցելու շինարարական աշխատանքներ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԿԻՑ ԽԱՉՄԵՐՈՒԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

## Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ

| N/N | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | Արժեքը հազ. դրամ Միավորի | Ամբողջը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | Տարածքի բարեկարգում | | | | |
| | 1. Մետաղական ցանկապատ | | | | |
| 1 | Խրամուղու փորում II կարգի գրունտում էքսկավատորով (0,5$մ^3$ շ/տ), կողից | մ | 14,4 | 0,5 | 6,97 |
| 2 | Խճի նախապատրաստում հիմքերի տակ H=0,1մ, b- 0.3մ | $մ^3$ | 1,44 | 5,03 | 7,25 |
| 3 | Խամքարաբետոնե նախապատրաստում հիմքերի տակ H 1.0մ, b 0,3մ B7,5 դասի | $մ^3$ | 1,44 | 31,70 | 45,64 |
| 4 | Միաձույլ հիմքեր B20 դասի բետոնից H=0,3մ, B=0,2մ | մ | 11,5 | 46,8 | 538,6 |
| 5 | Ամրան A500C դասի (Φ10) | տ | 0,47 | 358,59 | 168,54 |
| 6 | Մետաղական ցանկապատի պատրաստում և մոնտաժում 1.7x0.8մ (2 հատ) (50x40x2.5մմ 34գ.մ, 20x20x2մմ 110գ.մ) | տ | 0,10 | 547,62 | 54.76 |
| 7 | Մետաղական կոնստրուկցիաների նախաներկում և երկշերտ յուղաներկում | տ | 0,10 | 25,95 | 2.60 |
| 8 | Ծխնի | հատ | 4 | 0,341 | 1,36 |
| 9 | Փական | հատ | 2 | 2 | 3,41 |
| 10 | Մետաղական խողովակներից ցանկապատի պատրաստում և մոնտաժում | տ | 5,060 | 513,132 | 2596,449 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Մետաղական ցանկապատի ներկում հակակոռոզիոն ներկով, նախաներկմամբ | տ | 5,060 | 21,405 | 108,307 |
| 12 | Ներդիր կլեմներ պողպատաթերթից δ=5մմ | տ | 0,12 | 545,337 | 65,440 |
| | **2. Ճեմուղիների սալահատակ** | | | | |
| 1 | Խճի նախաշերտ H=10սմ | $մ^2$ | 1250,0 | 0,3 | 351,2 |
| 2 | Սալվածք տուֆե սալերից δ=30մմ | $մ^2$ | 480,0 | 7,9 | 3768,9 |
| 3 | Սալվածք բազալտե սալերից δ=30մմ | $մ^2$ | 57,0 | 13,4 | 765,1 |
| 4 | Տարածքի սալիկապատում բետոնե զուգահեռ ձևավոր սալիկներով δ=60մմ | $մ^2$ | 713,0 | 5,1 | 3624,2 |
| | **3. Կամրջակ** | | | | |
| 1 | Մետաղական կառուցվածքի մետաղական կարկասի ամրացում ուղղանկյուն խողովակներից (80x60x3... 45.0գծմ (0.325տ)) | տ | 0,325 | 539,6 | 175,4 |
| 2 | Միաձույլ Ե/Բ հատակի սալ H=100մմ B20 դասի բետոնից | $մ^3$ | 9,6 | 39,9 | 382,9 |
| 3 | Ամրանացանց Ø6մմ AcI դասի ամրանից 200x200մմ բջիջով | տ | 0,194 | 394,5 | 76,5 |
| 4 | Մետաղական կամրջակի երկշերտ յուղաներկում /մոխրագույն/ | $մ^2$ | 50,0 | 1,0 | 51,3 |
| | **4. Այգու վերջնամասում խաչմերուկի բարեկարգման աշխատանքներ** | | | | |
| 1 | Խրամուղու փորում III կարգի գրունտում էքսկավատորով | $մ^3$ | 14,9 | 0,5 | 7,2 |
| 2 | Տարածքի մակերևույթի հարթեցում բուլդոզերով | $մ^2$ | 500,0 | 0,0 | 6,8 |
| 3 | Համբարարենտե հիմքերի իրականացում H=0,6մ, b=0,45մ, L=55գծմ B7,5 դասի | $մ^3$ | 14,85 | 24,70 | 366.79 |
| 4 | Պատերի շարվածք անկանոն բազալտե քարով H=0.4մ, b=0,4մ, L=55գծմ | $մ^3$ | 8.80 | 18,55 | 163,28 |
| 5 | Թասակ բազալտե հղկված սալերից δ=50մմ, B=0.4մ (38գծմ) | $մ^2$ | 22,9 | 34,7 | 793,5 |
| 6 | Եզրաքարերի քանդում և հեռացում | մ | 12,0 | 5,9 | 70,3 |
| 7 | Բուսահողի մշակում էքսկավատորով (0.5$մ^3$ շ/տ), բարձելով ա/ինքնաթափի վրա | $մ^3$ | 57,6 | 0,6 | 33,9 |
| 8 | Տեղափոխում մինչև 1կմ հեռավորությունից | տ | 74,9 | 0.7 | 54,8 |
| 9 | Բուսահողի բաշխում ձեռքով միջանցքներում H=40սմ | $մ^2$ | 170,0 | 0,6 | 99,0 |
| 10 | Միջնապատերի հարթեցում ձեռքով | $մ^2$ | 170,0 | 0,1 | 22,9 |
| 11 | Խոտի սերմի ցանում ջրելու միջոցով (հիդրոցանքս) | $մ^2$ | 170,0 | 0,4 | 75,9 |
| 12 | Շինաղբի բարձում ա/ինքնաթափի վրա և տեղափոխում 1կմ | տ | 20,0 | 1,8 | 36,3 |
| 13 | Եղևնու տնկում | հատ | 1,0 | 113,7 | 113,7 |
| | **5. Խաչմերուկի կարգավորման համար լուսաֆորների տեղադրման աշխատանքներ** | | | | |
| 1 | Սալվածքի ասֆալտբետոնե ծածկույթի քանդում | $մ^2$ | 1,50 | 0,06 | 0,08 |
| 2 | Խճի նախաշերտի քանդում | $մ^3$ | 1,18 | 0.47 | 0,55 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Խրամուղու փորում III կարգի գրունտում էքսկավատորով | մ³ | 10,00 | 0.48 | 4,84 |
| 4 | Լուսաֆորների տեղադրում ձեռքով | հատ | 3.0 | 687,9 | 2063,78 |
| 5 | Միաձույլ հիմքեր B20 դասի բետոնից H=0.3մ, B=0.2մ | մ³ | 0,70 | 46,8 | 32,73 |
| 6 | Ամրան A500C դասի (Փ10) | տ | 0,05 | 358,6 | 17,93 |
| | 6. Ասֆալտապատման աշխատանքներ | | | | |
| 1 | Ավազակոպճային հիմք H=15սմ (180մ²) | մ³ | 165,0 | 2,9 | 486,2 |
| 2 | Խճային հիմք H=10սմ (180մ²) | մ³ | 110,0 | 8,0 | 875,8 |
| 3 | Ծածկի ստորին շերտ H=5սմ խոշորահատիկ ծակոտկեն III կարգի տաք ասֆալտբետոնից | մ² | 1100,0 | 3,2 | 3528,5 |
| 4 | Ծածկի վերին շերտ H=4սմ մանրահատիկ, խիտ "Б" տիպի II կարգի տաք ասֆալտբետոնից | մ² | 1100,0 | 2,8 | 3109,5 |
| | *Ընդամենը* | | | | **24759,24** |
| | *Վերադիր ծախսեր 13.3%* | | | | 3292,98 |
| | *Ընդամենը* | | | | 28052,22 |
| | ***Շահույթ 11%*** | | | | 3085,74 |
| | *Ընդամենը* | | | | *31137,97* |
| | *Ա.Ա.Հ. 20%* | | | | 6227,59 |
| | *Ընդամենը* | | | | **37365,562** |

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

## Աշտարակ համայնքի Նախկին շուկայի տարածքում ժամանցային գոտու կառուցման աշխատանքներ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Տարածքի բարեկարգում | | | | |
| | 1. Միջամարգեր | | | | |
| 1 | Բուսահողի մշակում էքսկավատորով (0.5մ³ շ/ա), բարձելով ա/ինքնաթափի վրա | մ³ | 224,8 | 0.58 | 129,79 |
| 2 | Տեղափոխում տարածք 1կմ հեռավորությունից | տ | 292,24 | 0,72 | 210,12 |
| 3 | Բուսահողի բաշխում ձեռքով միջամարգերում H=40սմ | մ² | 562 | 0,62 | 349,15 |
| 4 | Միջամարգերի հարթեցում ձեռքով | մ² | 562 | 0,12 | 69,46 |
| 5 | Խոտի սերմի ցանում ջրելու միջոցով (հիդրոցանքս) | մ² | 562 | 0.44 | 249,36 |
| | **Ընդամենը 1** | | | | **1007,88** |
| | 2. Խաղադաշտ | | | | |
| 1 | Մանկական խաղահրապարակի տեղադրում | կոմպ | 1 | 10000,00 | 10000,00 |
| 2 | Գրունտի տոփանում խճով հատակի տակ | մ² | 130 | 0,29 | 37,17 |
| 3 | Միաձույլ ե/բ հատակի սալ H=150սմ B20 դասի բետոնից | մ³ | 13 | 40,05 | 520,68 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Ամրանացանց Φ6մմ A-I պողպատից 200x200մմ բջիջով | տ | 0.194 | 394,49 | 76,53 |
| 5 | Խաղադաշտի ծածկ ավազից H=10սմ 455մ²) | մ³ | 45.5 | 3,21 | 146,01 |
| | **Ընդամենը 2՝** | | | | **10780,40** |
| | **1. Հողային աշխատանքներ** | | | | |
| 1 | Խրամուղու փորում III կարգի գրունտում էքսկավատորով | մ³ | 17 | 0.474 | 8,07 |
| 2 | Տարածքի մակերեսույթի համահարթեցում բուլդոզերով | մ² | 529 | 0,013 | 7,04 |
| | **Ընդամենը 1՝** | | | | **15,11** |
| | **2. Շինարարական աշխատանքներ** | | | | |
| 1 | Խամբարաբետոնե հիմքեր իրականացում H=0,3մ b=0,45մ, L=116գծմ B7,5 դասի | մ³ | 15.66 | 26.438 | 414,012 |
| 2 | Պատերի շարվածք անկանոն տուֆ քարով | մ³ | 21.83 | 18,143 | 396,053 |
| 3 | Թասակ բազալտե հղկված սալերից δ=50մմ, B=0.4մ (38գծմ) | մ² | 51 | 33.132 | 1689,733 |
| 4 | Տարածքի սալիկապատում բետոնե գունավոր ձևավոր սալիկներով δ=60մմ | մ² | 296 | 5,544 | 1640.923 |
| 5 | Եզրաքարերի քանդում և վերականգնում | մ | 30 | 5.684 | 170,519 |
| 6 | Բետոնե եզրաքարերի տեղադրում 0,2x0,15մ բետոնե հիմքով | մ | 240 | 4,079 | 979,029 |
| 7 | Տարածքի սալիկապատում տուֆե սալիկներով δ=60մմ | մ² | 233 | 3,733 | 869,795 |
| | **Ընդամենը 2** | | | | **6160,06** |
| | **3.մուտքի պատրաստում և մոնտաժում** | | | | |
| 1 | Խամբարաբետոնե հիմքեր իրականացում H=0.3մ, b=0.45մ, L=1գծմ B7,5 դասի | մ³ | 0.135 | 26.438 | 3,569 |
| 2 | Մետաղական խողովակներից մուտքի պատրաստում և մոնտաժում | տ | 0,3 | 514,315 | 154,294 |
| 3 | Մետաղական տարերի ներկում հակակոռոզիոն ներկով, նախաներկվածքով | տ | 0.3 | 21.310 | 6,393 |
| | **Ընդամենը 3** | | | | **164,26** |
| | **Արտաքին ջրամատակարարման ցանց** | | | | |
| 1 | Խրամուղու մշակում IV կարգի ընահողում ձեռքով H=0.4մ | մ³ | 18 | 3,330 | 59,944 |
| 2 | Ավազե շերտի փռում խողովակի տակ և վրայից | մ³ | 6 | 1,906 | 11,436 |
| 3 | Պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում Φ15x1.8մմ ձևավոր մասերի տեղադրմամբ, կցմամբ, փորձարկմամբ և ախտահանմամբ | մ | 150 | 2,115 | 317,245 |
| 4 | Ֆիտինգներ և ձևավոր մասեր | հատ | 26 | 0,115 | 2,980 |
| 5 | Ջրաչափ Φ15մմ | հատ | 1 | 10.099 | 10,099 |
| 6 | Զտիչ Φ15մմ | հատ | 1 | 3,449 | 3,449 |
| 7 | Խմելու ջրագծի փորձարկում, ախտահանում | մ | 150 | 0,032 | 4,759 |
| 8 | Ջրամատակարարման դիտահոր | հատ | 1 | 5,150 | 5,150 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | Փական ջրային Փ15մմ | հատ | 1 | 4.725 | 4.725 |
| 10 | Գրունտի հետլիցք ձեռքով, տոփանումով | $մ^3$ | 12 | 0.965 | 11.577 |
| | Ընդամենը | | | | **431,36** |
| | Արտաքին ջրահեռացման ցանց | | | | |
| 1 | Խրամուղու մշակում IV կարգի բնահողում ձեռքով H=0.8մ | $մ^3$ | 11.5 | 3.875 | 44.567 |
| 2 | Պողպատե խողովակ խրամուղում Փ32մմ | մ | 15 | 0.435 | 6.521 |
| 3 | Փական ջրային Փ15մմ | հատ | 1 | 4.952 | 4.952 |
| 4 | Ջրային դիտահոր հավաքովի ե/բ էլեմենտներից Փ1000մմ H=1,2մ | $մ^3$ | 1.1 | 138.958 | 152.853 |
| 5 | Թուջե դուռ Փ700մմ | հատ | 1 | 63.028 | 63.028 |
| 6 | Դիտահորի ամրացման մասեր | տ | 0.02 | 458.388 | 9.168 |
| 7 | Գրունտի հետլիցք ձեռքով, տոփանումով | $մ^3$ | 10 | 1.123 | 11.227 |
| 8 | Ավելորդ գրունտի ձեռքով բարձում ավտոինքնաթափի վրա և տեղափոխում 1կմ (1.5$մ^3$) | տ | 2.925 | 1.045 | 3.056 |
| 9 | Եզրաքարերի քանդում և վերականգնում | մ | 2 | 6.043 | 12.086 |
| | Ընդամենը | | | | 307,46 |
| | Ընդամենը | | | | 18866,53 |
| | *Վերադիր ծախսեր 13.3%* | | | | *2509,25* |
| | *Ընդամենը* | | | | ***21375,78*** |
| | *Շահույթ 11%* | | | | *2351,34* |
| | *Ընդամենը* | | | | *23727,11* |
| | *Ա.Ա.Հ. 20%* | | | | *4745,42* |
| | *Ընդամենը* | | | | ***28472,534*** |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ - համայնքում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի
համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900442101169
Համայնքի ղեկավար

Ծ.Ճահվերդյան

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ագարակ» ԲԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի
«Արշինբանկ» ՓԲԸ Աշտարակ մ/ճ
Հ/Հ 247070005407
ՀՎՀՀ05003862

Կ.Բարսեղյան
/ստորագրություն/
Կ.Տ.

05003862 "ԱԳԱՐԱԿ" "АГАРАК" "AGARAK"

*Հավելված թիվ 2*
*« 08 » Օգոստոսի 2019 թ. կնքված*
*ՀՀԱՄԱԸՏ-ԳՀԱԾՁԲ-19/2/1 ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Աշտարակ համայնքի Կոմիտասի անվան այգու բարեկարգման ,կից խաչմերուկի բարեկարգման և կարգավորման շինարարական աշխատանքներ և Աշտարակ համայնքի Նախկին շուկայի տարածքում ժամանցային գոտու կառուցելու շինարարական աշխատանքներԱԸԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N п/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Աշտարակ համայնքի Կոմիտասի անվան այգու բարեկարգման ,կից խաչմերուկի բարեկարգման և կարգավորման շինարարական աշխատանքներ | Պայմանագրի կնքման օրը | մինչև 2019թ. Նոյեմբերի 15-ը |
| 2 | Աշտարակ համայնքի Նախկին շուկայի տարածքում ժամանցային գոտու կառուցելու շինարարական աշխատանքներ | Պայմանագրի կնքման օրը | մինչև 2019թ. Նոյեմբերի 15-ը |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101169
Համայնքի ղեկավար

____________ Ծ.Ճահվերդյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ագարակ» ԲԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի
«Արշինբանկ» ՓԲԸ Աշտարակ մ/6
Հ/Հ 247070005407
ՀՎՀՀ05003862

____________ Կ.Բարսեղյան
/տնօրինություն/
Կ.Տ

Հավելված N 3
« *08* » Օգոստոսի 2019 թ. կնքված
ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-19/2/1*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231270 | Աշտարակ համայնքի Կոմիտասի անվան այգու բարեկարգման կից խաչմերուկի բարեկարգման և կարգավորման շինարարական աշխատանքներ | | | | | | | | | | | 28 800 000 | 28 800 000 | 28 800 000 |
| 2 | 45231270 | Աշտարակ համայնքի Նախկին շուկայի տարածքում ժամանցային գոտի կառուցելու շինարարական աշխատանքներ | | | | | | | | | | | 21 900 000 | 21 900 000 | 21 900 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101169
Համայնքի ղեկավար

Ծ.Շահվերդյան

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ագարակ» ԲԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի
«Արշինբանկ» ՓԲԸ Աշտարակ մ/ճ
Հ/Հ 247070005407
ՀՎՀՀ05003862

Ա.Քարսեղյան
/ստորագրություն/
ԿՏ

*Հավելված թիվ 4*
*« 08 » Օգոստոսի 2019 թ. կնքված*
*ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-19/2/1ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| գտնվելու վայրը | գտնվելու վայրը |
| հհ | հհ |
| հվհհ | հվհհ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ստորագրություն | ստորագրություն |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
« 08 » Օգոստոսի 2019 թ. կնքված
ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-19/2/1ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________ (պատվիրատուի անվանումը) -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________ (կապալառուի անվանումը) -ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ________ (պայմանագիրը կնքելու ամիսը, ամսաթիվը) -ին կնքված N ________ (պայմանագրի համարը) գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________ -ին հանձնման ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

ազգանունը, անունը

ստորագրությունը

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանունը, անունը

ստորագրությունը